

ՀՀ ԻՐԱՎԱՔԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (67)
2015 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ղ ի ու ը ղ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝ <http://publications.y-su.am/>

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.03.2015

Հանձնված է տպագրության

18.04.2015

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (67)
2015 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1, юридический
факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: <http://publications.y-su.am/>

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.03.2015
Подписано к печати 18.04.2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐԸ.....4

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արփիմե Հովհաննիսյան

ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ6

Գևորգ Բաղդասարյան

ՂԱՏԱՐԱՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ.....14

Հայկ Սարգսյան

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՓՈԽԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ` ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ24

Սերգեյ Առաքելյան

ԷՎԿԱՆ ՎՆԱՍԸ` ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱՆԻՇ.....35

Գևորգ Խորալեյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼԻՍ41

Լայա Գրիգորյան

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ.....48

Анжела Должикова, Екатерина Киселева

ОРГАНИЗАЦИОННО-МЕТОДИЧЕСКИЕ ОСНОВЫ ПОДГОТОВКИ К КОМПЛЕКСНОМУ ЭКЗАМЕНУ ДЛЯ МИГРАНТОВ В РФ.....54

Արման Սարգսյան

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ63

Վահագն Գրիգորյան

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎԵՐՊԱԿԱՆ-ԿԱՐԳԱԴՐԻՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....75

Տիգրան Խաչիկյան

ՍԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ.....86

ԷԱԿԱՆ ՎՆԱՍԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇ

Սերգեյ Առաքելյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների
կազմակերպման կատարելագործման բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների դոկտոր*

Քրեական իրավունքում օրինականության սկզբունքի կարևորագույն պահանջներին մեկը հանրորեն վտանգավոր արարքը քրեական գործող օրենսդրությանը համապատասխան որակելն է: Մասնագիտական գրականության մեջ հանցագործությունների որակումը սահմանվում է որպես «կատարված արարքի ու քրեաիրավական նորմով նախատեսված հանցակազմի հատկանիշների միջև ճշգրիտ համապատասխանության բացահայտում և իրավաբանական ամրագրում»¹: Այլ կերպ ասած՝ հենց արարքի որակումն է քրեաիրավական համապատասխան նորմի կիրառման հիմք, որի միջոցով լուծվում է (դրական կամ բացասական) անձի քրեական պատասխանատվության հարցը: Այդ իսկ պատճառով արարքի սխալ որակման հետևանքով ոչ միայն խախտվում է օրինականությունը, այլև ոտնահարվում են արդարադատության շահերը, ինչի պատճառով հասարակության մեջ բացասական վերաբերմունք է ձևավորվում ոչ միայն դատարանների, այլև իրավապահ մարմինների ու պետական ողջ ապարատի գործունեության վերաբերյալ:

Այսպիսով, հանցագործությունների պատշաճ որակման առումով անհրաժեշտ է ոչ միայն հստակ պատկերացնել օրենսդրական համապատասխան ձևակերպումները, այլև բացահայտել ու իրավաբանորեն ամրագրել կատարված արարքի և քրեաիրավական որոշակի նորմով նախատեսված հանցակազմի հատկանիշների միջև ճշգրիտ համապատասխանությունը: Մինչդեռ, օրենսդրական առանձին կարգավորումների ընկալման և մեկնաբանման առումով հայաստանյան իրավակիրառ պրակտիկայում հաճախ բարդություններ են առաջանում, որոնք հանգեցնում են արարքների միանշանակ որակման հետ կապված վեճերի ու տարակարծությունների: Այդ իմաստով բացառություն չեն նաև ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 308-ով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), 309-ով (պաշտոնեական լիազորություններն անցնելը) և 315-ով (պաշտոնեական անվտանգությունը) նախատեսված իրավակարգավորումները, որոնք վերաբերում են «էական վնաս» հասկացությանը:

Պատահական չէ, որ այս կապակցությամբ թե՛ տեսաբանները և թե՛ պրակտիկ աշխատողներն առաջարկում են քրեական օրենքում հնարավորինս օգտագործել հստակ ձևակերպված, միանշանակ ընկալվող և միատեսակ մեկնաբանվող հասկացություններ, քանի որ երկիմաստ, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող իրավակարգավորումները հաճախ համապատասխան արարքների սխալ որակման պատճառ են դառնում²: Միևնույն ժամանակ, սակայն, մասնագետներն արձանագրում են,

¹ Տե՛ս, օրինակ՝ Кудрявцев В.Н. Объективная сторона преступления. М., 1960, էջ 9:

² Տե՛ս նաև՝ Гончарова Г. К вопросу о значении понятия существенного вреда по делам о преступлениях против интересов службы // Законность и правопорядок, № 3(19), 2011, էջեր 30-31:

որ հնարավոր չէ ընդհանրապես հրաժարվել օրենքում գնահատողական հասկացություններ օգտագործելուց, քանզի ոչ բոլոր դեպքերում է հնարավոր սահմանել որոշակի հանգամանքների սպառիչ, համընդգրկուն ցանկեր:

Այսպես, Ս. Ա. Կրասնովան նշում է, որ «... ներկայումս առավել լայն տարածում է ստացել, այսպես կոչված, գնահատողական հասկացություններ օգտագործելու անհրաժեշտության և օգտակարության վերաբերյալ կարծիքը»¹: Յա. Մ. Բրայնինի կարծիքով՝ «... քրեական օրենքների նորմերի դիսպոզիցիաներում գնահատողական հատկանիշների ընդգրկումը շատ հաճախ անխուսափելի է և անհրաժեշտ»: Համանման կարծիք են արտահայտում նաև Ս. Ս. Բեգրուկովը և Տ. Վ. Կաշանինան²:

Այսպիսով, քննարկվող հիմնախնդրի առումով անհրաժեշտ է նախ և առաջ հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ էական վնասը կարող է դրսևորվել ինչպես գույքային, այնպես էլ այլ (ոչ գույքային) ձևով: Ընդ որում, քննարկվող հանցագործությունների պարագայում օրենքը հստակ սահմանում է այն կոնկրետ չափը, որի դեպքում գույքային վնասը համարվում է էական: Մասնավորապես, ՀՀ քր. օր. -ի հոդված 308-ի 1-ին մասի համաձայն՝ էական գույքային վնաս է համարվում «հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը», հոդված 309-ի 1-ին մասի համաձայն՝ «... հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը», իսկ հոդված 315-ի 1-ին մասի համաձայն՝ «... հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը»: Հետևաբար, այս առումով իրավակիրառ պրակտիկայում բարդություններ չեն առաջանում:

Իրավիճակն այլ է ոչ գույքային վնասի պարագայում: Բանն այն է, որ «ոչ գույքային վնաս» հասկացությունը դասվում է գնահատողականների շարքը, ինչի պատճառով դրա բովանդակության հստակ սահմանումը որոշակի բարդություն է ներկայացնում: Այլ կերպ ասած, ոչ գույքային վնասի էական և ոչ էական տեսակների, հետևաբար նաև՝ դրանցով պայմանավորված հանցավոր ու ոչ հանցավոր արարքների սահմանազատման հստակ չափանիշներ գոյություն չունեն:

Այս առումով հարկ է նշել, որ պաշտոնատար անձի ցանկացած ոչ իրավաչափ վարքագիծ, փաստորեն, հեղինակագրվում է պետական իշխանությունը և խոչընդոտում պետական ապարատի նորմալ գործունեությունը: Սակայն միշտ չէ, որ նշված հեղինակագրվումը կամ խոչընդոտումը կարող է գնահատվել որպես էական վնաս, հետևաբար նաև՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու, պաշտոնական լիազորություններն անցնելու կամ պաշտոնական անփութության հատկանիշ: Հակառակ պարագայում համապատասխան հանցակազմերում այդ հետևանքը որպես հանցագործության պարտադիր հատկանիշ նախատեսելն անիմաստ կլիներ:

Տվյալ հարցին է անդրադարձել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը: Մասնավորապես, դատարանի 04.11.2014թ. թիվ ՍԴՈ-1174 որոշման 5-րդ կետում արձանագրվում է. «... Այլ է խնդիրը ոչ գույքային վնասի դեպ-

¹ Տե՛ս **Краснова С. А.** Определение понятия «добросовестность» в российском гражданском праве // Национальный центр Республики Беларусь. Минск, 2011 [էլեկտրոնային ռեսուրս]:

² Տե՛ս **Брайнин Я.М.** Уголовный закон и его применение. М.: Юрид. лит., 1967, **Безруков С.С.** Оценочные понятия и термины в уголовно-процессуальном законодательстве России. Омск, 2003, էջ 122, **Кашанина Т.В.** Оценочные понятия в советском праве: Диссертация ... канд. юрид. наук, Свердловск, 1974, էջ 17:

քում, երբ վնասի էական լինելու հանգամանքի գնահատումը դժվարանում է այն առումով, որ օրենսդրորեն ուրվագծված չեն էական ոչ գույքային վնասի սահմանները: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքները, որ էական վնասը հանդիսանում է ... օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, և որ տվյալ դեպքում ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնաս կարող է պատճառվել ..., կարևորվում է հասցված ոչ գույքային վնասի էական լինելու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, քանի որ դրանից է կախված ամբաստանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը»:

Նույն կետի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը վկայակոչում է նաև իր՝ 05.04.2011թ. թիվ ՍԴՈ-947 որոշման 8-րդ կետը, որում ամրագրված է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»:

Քննարկվող հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Հ. Սահակյանի վերաբերյալ դատարանի 2013 թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման 15-րդ կետում նշվում է. «... եթե գույքային վնասի դեպքում նախատեսված է որոշակի շեմ ..., ապա ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները (այդ թվում՝ անձանց, կազմակերպություններին, հասարակությանը կամ պետությանը պատճառված բարոյական վնասի չափը, տուժողների քանակը, խախտված իրավունքների և ազատությունների բնույթն ու խախտման աստիճանը, հիմնարկության կամ ձեռնարկության բնականոն գործունեության խաթարման աստիճանը և այլն)»: Այլ կերպ ասած՝ իրավակիրառ պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները, որոնցով քննարկվող դեպքերում պետք է գնահատվի վնասի էական կամ ոչ էական լինելը:

Մասնագիտական գրականության մեջ այդ առումով արդարացիորեն առաջարկվում է սահմանել այն հանգամանքների կամ իրադրությունների օրինակելի (կողմնորոշող) ցանկը, որոնք պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների իմաստով կարող են որոշակի հետևանքները որպես էական վնաս գնահատելու հիմք հանդիսանալ¹: Ամփոփելով այդ կապակցությամբ արտահայտված գործնական նշանակություն ունեցող տեսական մոտեցումները՝ կարելի է մատնանշել հետևյալ հիմնական հանգամանքները.

1. Գնահատող հասկացության բովանդակությունը բացահայտելու համար նպատակահարմար չէ օգտագործել այլ գնահատողական, չկոնկրետացված, ոչ հստակ հասկացություններ: Բացի դրանից, օրինակելի (կողմնորոշող) ցանկի մեջ մտցվող հանգամանքը չպետք է չափազանց լայն մեկնաբանությունների տեղիք տա: Այսպես,

¹ Տե՛ս, օրինակ՝ **Гончарова Г.** К вопросу о значении понятия существенного вреда по делам о преступлениях против интересов службы // Законность и правопорядок, № 3(19), 2011, էջեր 30-34, **Лосев В.** Существенный вред в составах преступлений против интересов службы // Законность и правопорядок, № 4(28), 2013, էջեր 57-58:

օրինակ՝ պատճառված վնասը որպես էական գնահատելու համար ցանկալի չէ պարզապես այնպիսի հասկացությունների օգտագործումը, ինչպիսիք են «ֆինանսական կարգապահության կոպիտ խախտումները», «բարոյական կամ ֆիզիկական վնասի պատճառումը», «պետական կազմակերպության տնտեսական վիճակի վատթարացումը», «տնտեսության տվյալ ոլորտի բարեփոխման տեմպերի դանդաղեցումը» և այլն: Առավել նպատակահարմար կլինեն այդ հասկացությունների բովանդակության և տվյալ արարքի համար դրանց նշանակության հստակեցումը, որոշակիացումը: Մասնավորապես, նման դեպքերում պետք է նշել, թե կոնկրետ ինչու է դրսևորվել, օրինակ, ֆինանսական կարգապահության խախտումը կամ կազմակերպության տնտեսական վիճակի վատթարացումը, և հիմնավորել, թե որքանով է դրանց հետևանքով պատճառված վնասը էական ազդեցություն ունեցել անձանց կամ կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի կամ հասարակության կամ պետության օրինական շահերի վրա:

2. Պետական իշխանության հեղինակագրկումը՝ որպես պետական մարմինների գործունեության սկզբունքների խախտման արդյունք, ինքնին հանրորեն վտանգավոր այլ հետևանքների բացակայության պարագայում, չի կարող գնահատվել իբրև էական վնաս քննարկվող հանցագործությունների իմաստով: Հակառակ պարագայում բավարար կլինի դատավարական համապատասխան փաստաթղթերում պարզապես մատնանշել պետական իշխանության հեղինակագրկումը և քրեական պատասխանատվության ենթարկել ոչ իրավաչափ ցանկացած վարքագիծ դրսևորած պաշտոնատար անձի, ինչն անարդար է, հետևաբար նաև՝ անընդունելի: Մասնավորապես, չի կարելի որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում (պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն) որակել ճանապարհային ոստիկանի անգործությունը, որը պարզապես դրսևորվել է հոծ գիծը հատած վարորդի խախտումը չարձանագրելու կամ անուշադրության մատնելու մեջ՝ առանց որևէ այլ հետևանք առաջացնելու:

3. Քննարկվող հանցագործությունների օբյեկտիվ կողմերի պարտադիր հատկանիշ է հանրորեն վտանգավոր հետևանքը (էական վնասը), այլ ոչ թե դրա առաջացման վտանգ ստեղծելը: Վտանգ ստեղծելը և հետևանքն իրար բացառող երևույթներ են: Ուստի դրանցից մեկի առկայությունը վկայում է մյուսի բացակայության մասին: Հետևաբար, հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման վտանգ ստեղծելը չի կարող գնահատվել որպես էական վնաս (թե՛ գույքային և թե՛ ոչ գույքային): Այսպես, օրինակ՝ որպես էական վնասի պատճառումը հավաստող հանգամանք չի կարող գնահատվել մաքսային ծառայողի կողմից անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների բացթողումը, որն ընդամենը վտանգ է ստեղծել բնակչության առողջության համար՝ առանց իրականում որևէ վնասակար հետևանք առաջացնելու: Կամ՝ որպես այդպիսին չի կարող գնահատվել նաև կաշառք ստացող պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի մատնանշած անձին աշխատանքի ընդունելը, որով տվյալ կազմակերպության բնականոն գործունեությունը խաթարելու վտանգ է ստեղծվել:

4. ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 308-ի, 309-ի և 315-ի իմաստով որպես էական վնաս չեն կարող գնահատվել նաև այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են՝ այլ անձանց (ինչպես ենթակաների, այնպես էլ կողմնակի անձանց) կողմից վարչական կամ կարգապահական իրավախախտումներ կատարելը, ինչպես նաև պաշտոնատար անձի կողմից դրանց կատարման համար պայմաններ ստեղծելը, դրանք թաքցնելը կամ դրանց հա-

մար վարչական կամ կարգապահական պատասխանատվության չենթարկելը: Այսպես, օրինակ՝ քննարկվող հանցակազմերի իմաստով էական վնասը կբացակայի, եթե պետական մարմնի ղեկավարը, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից դրդված, կարգապահական պատասխանատվության չենթարկի աշխատանքից պարբերաբար ուշացողին:

5. Քննարկվող հանցագործությունների իմաստով որպես էական վնաս չի կարող գնահատվել նաև պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելով կամ դրանք անցնելով վարչական կամ կարգապահական իրավախախտում կատարելը: Հանրորեն վտանգավոր այլ հետևանքների բացակայության պարագայում պաշտոնատար անձի նշված հակաիրավական վարքագիծը հանցագործություն համարվել չի կարող: Օրինակ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը կբացակայի, եթե ոստիկանության ծառայողը, իրեն ամրակցված ծառայողական ավտոմեքենայով աշխատանքի շտապելով, գերազանցում է թույլատրելի արագությունը:

6. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ դրանք անցնելու հանցակազմերի իմաստով որպես էական վնաս չի կարող գնահատվել նաև տվյալ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը: Բանն այն է, որ կաշառք ստանալը պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ դրանք անցնելու առանձնահատուկ դրսևորում է, որը նախատեսված է հատուկ նորմով: Հետևաբար, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ դրանք անցնելու համար կաշառք ստանալն ինքնուրույն հանցագործություն է, որը չի կարող գնահատվել որպես նշված հանցանքները կատարելու պատճառով առաջացած էական վնաս:

7. Ոչ գույքային էական վնասի մասին որևէ պարագայում խոսք չի կարող լինել այն դեպքերում, երբ պատճառված վնասը գույքային բնույթի է, սակայն չի գերազանցում ՀՀ քր. օր.-ի համապատասխան հողվածներով նախատեսված չափերը: Այսպես, օրինակ՝ եթե ճանապարհային ոստիկանը, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից դրդված, չի արձանագրում վարորդի խախտումը, որի համար ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է երեք հարյուր հազար դրամը չգերազանցող տուգանք, նրա արարքը հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքի բացակայության հիմքով չի կարող որակվել ՀՀ քր. օր.-ի հողված 308-ով:

Ամփոփելով էական վնասի գնահատմանը վերաբերող հիմնախնդիրների քննարկումը՝ հարկ է նշել, որ պետական ծառայության դեմ ուղղված համապատասխան հանցագործությունների հանրորեն վտանգավոր հետևանքները կարող են բազմազան և անկանխատեսելի լինել: Ուստի դրանց սպառնիչ ցանկը սահմանել հնարավոր չէ: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վնասի բնույթը որոշելու համար կարող է տարբեր ոլորտների մասնագետների (ձարտարագետների, տնտեսագետների, քաղաքագետների, սոցիոլոգների, հոգեբանների, գյուղատնտեսների և այլն) ներգրավման անհրաժեշտություն առաջանալ, որպիսի հանգամանքն իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է միշտ հաշվի առնել:

СУЩЕСТВЕННЫЙ ВРЕД КАК ПРИЗНАК ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ

Сергей Аракелян

*Доцент кафедры уголовного права ЕГУ, доктор юридических наук
начальник отдела совершенствования организации следственных работ и
разработки методики расследования Специальной следственной службы РА,*

В статье рассматриваются актуальные для теории уголовного права и правоприменительной практики проблемы, связанные с определением существенного вреда как криминообразующего (квалификационного) последствия преступлений против государственной службы. В данной связи выдвигается идея формирования примерного (ориентирующего) перечня обстоятельств, которые могут быть оценены как существенный вред. Кроме того, предлагаются соответствующие правила квалификации преступлений, призванные недопустить необоснованного включения в этот перечень обстоятельств, которые не могут быть признаны существенным вредом.

SUBSTANTIAL DAMAGE AS AN ATTRIBUTE OF CRIMES AGAINST STATE SERVICE

Sergey Arakelyan

*Associate Professor of the YSU Chair of Criminal Law, Doctor of Legal Sciences,
Chief of the Department of Organization of
Investigation Activities and Elaboration of the Methods of Investigation
of the Special Investigative Service of the RA*

Some actual problems connected with definition of substantial damage as a crime-building (qualifying) consequence of crimes against state service, topical for the theory of Criminal law and the law enforcement practice, are discussed in the presented article. In this context the idea of building of the approximate (guiding) list of circumstances which can be recognized as a substantial damage is put forward. Besides, the relevant rules aimed at barring of unforced inclusion into mentioned approximate list the circumstances which cannot be recognized as substantial damage are offered.

Բանալի բառեր` պաշտոնեական լիազորություններ, լիազորությունների չարաշահում, լիազորությունների անցում, հանցազորություն, հանցազորության հետևանք, էական վնաս, հանցազորության որակում:

Ключевые слова: должностные полномочия, злоупотребление полномочиями, превышение полномочий, преступление, последствия преступления, существенный вред, квалификация преступления.

Key words: official power, abuse of power, excess of power, crime, offence consequences, substantial damage, crime qualification.